ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԿԱՆԱՆՑ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# Ֆեմինիստական շարժումը Հայաստանում բազմակողմանի ճգնաժամերի և նվաճումների միջև

*հետազոտության արդյունքներ*

Լուսանկարը՝ Կանանց ռեսուրսային կենտրոնի արխիվից

Հարցազրույցները՝
Լյուդմիլա
Շիրվանյանի

Վերլուծությունը՝
Հայաստանում
կանանց
հիմնադրամի

Երևան, 2025թ.

# ՖԵՄԻՆԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԱՌՄԱԿՈՂՄԱՆԻ ՃԳՆԱԺԱՄԵՐԻԵՎ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ

© Հայաստանում կանանց հիմնադրամ
www.womenfundarmenia.org

2022-2023 թվականներին Հայաստանում կանանց հիմնադրամն իրականացրել է 33 հարցազրույց՝ Հայաստանում կանանց/ֆեմինիստական շարժման ներկայիս իրավիճակը հասկանալու համար: Խորին հարցազրույցներին զուգահեռ՝ կիրառվել է նաև շարժումների գնահատման գործիքը, որը մշակվել է Կանանց համաշխարհային հիմնադրամի (Global Fund for Women) կողմից:

Հարցազրույցների ընթացքում քննարկվել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝

- Արդյո՞ք Հայաստանում կա կանանց/ֆեմինիստական շարժում: Ո՞րն է հայաստանյան ֆեմինիստական շարժման օրակարգը: Որո՞նք են այն հիմնական ուղղությունները (թեմաներ, հարցեր, դիսկուրսներ և այլն), որոնց անդրադառնում է այսօր ֆեմինիստական շարժումը Հայաստանում:
- Ինչպե՞ս է կանանց/ֆեմինիստական շարժումը դրսևորվում վերջին տարիների բազմակի ճգնաժամերի համատեքստում:
- Ովքե՞ր են հայաստանյան կանանց/ֆեմինիստական շարժման հիմնական անդամները/մասնակիցները:
- Արդյո՞ք հայաստանյան կանանց/ֆեմինիստական շարժումն ունի ֆինանսավորման կարիք:
- Ֆեմինիստական շարժման մաս կազմելու «ընթացակարգերը» և գործընթացը: Ո՞վ կամ ինչպե՞ս է որոշում, թե ով կարող է լինել ֆեմինիստական շարժման մաս:

- Արդյո՞ք հայաստանյան ֆեմինիստական շարժումը բավարար ինտերսեկցիոնալ և ներառական է:
- Ինչպիսի՞ խոչընդոտներ կան կանանց/ֆեմինիստական շարժման ներսում: Ինչպե՞ս են դրանք հաղթահարվում:
- Ի՞նչ է ֆեմինիստական սոլիդարությունը:
- Կանանց/ֆեմինիստական շարժման ապագան Հայաստանում:

## Արդյո՞ք կա ֆեմինիստական շարժում Հայաստանում

Հետազոտության մասնակիցներից շատերի կարծիքով՝ ֆեմինիստական շարժումը Հայաստանում առկա է, և այն անցնում է որոշակի փուլերով: Հիմնական չափանիշներից մեկը գիտակցության փոփոխությունն է, որը տեղի է ունեցել հատկապես երիտասարդ կանանց շրջանում:

*«Արդյունքներով եմ նայում, թե ինչքան գիտակցության փոփոխություն կա, մասնավորապես կանանց ու երիտասարդ աղջիկների շրջանում, ես համեմատում եմ դա էն շրջանի հետ, երբ դեռ նոր սկիզբ առավ շարժումը կամ այդ ցանցը կամ մարդիկ, ովքեր իրենց համարում էին ֆեմինիստ կամ ունեին էդ ընդվզումը, բայց միգուցե դեռ չէին համարում իրենց ու փորձում էին ինչ-որ բան անել, անարդարության, անհավասարության ու կանանց օտարվածության հետ հաշտ ու համերաշխ չէին: Էն ժամանակվա ընդհանուր մտային, մարմնի ընկալումների,*

*սպասումների համեմատ՝ հիմա որ նայում ես, թե էդ նույն երիտասարդ կանայք ինչքան ավելի ակտիվ են, ինչքան ավելի շատ բան գիտեն, նաև առարկայական հասկանում են հա՛մ խտրականությունից, հա՛մ էն տարբերակումներից, որ իրանք բախվում են» /մեջբերում հարցազրույցներից/:*

*«Ըստ իս՝ գոյություն ունի և գոյություն ունեցել ա շատ վաղուց, ինչ-որ պահերի միգուցե ավելի պառակտված ա եղել, ինչ-որ պահերի՝ ավելի համախմբված, էդ շարժման ինչ-որ կոմպոնենտն էր, բայց ընդհանուր՝ հա, ինձ թվում ա՝ գոյություն ունի» /մեջբերում հարցազրույցներից/:*

*«Ե՛վ այո, և՛ ոչ: էդ դասական սոցիալական շարժումների տեսություններով եթե շարժվենք՝ ինչ ա շարժումը, ոնց ա ձևավորվում, ինչ փուլերով ա ընթանում և ուր ա հասնում, կարող ա մտածենք, որ չկա, բայց ինձ թվում ա, որ ամեն դեպքում կա, որովհետև կա խնդիրը, կան տարբեր խմբեր, նախաձեռնություններ, մարդիկ, ակտիվիստներ, որոնք էդ խնդրի հետ կապված անում են գործողություններ, որոնք ուղղված են որոշակի տեսակի նպատակի, և կա ինչ-որ ճանապարհ, էդ առումով՝ հա, կա» /մեջբերում հարցազրույցներից/:*

Հարցվողներից ոմանք նաև առաջարկում են տարանջատել շարժում և համայնք հասկացությունները:

*«Շարժում կա հենց որպես շարժում, հենց շարժում, բայց ես չունեմ համայնքի զգացողություն, մեծ համայնքի զգացողություն, որ կա մի համայնք, որին ես պատկանում եմ, կա փոքրաթիվ համայնք, կան մարդիկ, բայց էդպես լայն համայնք, մեծ համայնք, որը չի սահմանափակվում ինչ-որ իքս թվով մարդկանց անուններով, կարաս հաշվես՝ էս, էս, էս, ու վերջ: Որպես էդպիսին համայնք չկա, բայց շարժում իրա ուժգնությամբ՝ փոքր կամ մեծ» /մեջբերում հարցազրույցներից/:*

Այնուամենայնիվ, հարցվածների փոքր մասի կարծիքով՝ Հայաստանում կանանց շարժում որպես այդպիսին չկա: Փոխարենը կան խմբեր, որոնք իրականացնում են ֆեմինիստական գործողություններ:

*«Հայաստանում կան կանանց թեմային առնչվող հատվածային որոշակի նախաձեռնություններ, բայց շարժում, որպես էդպիսին, մի հատ կազմակերպված, չեմ կարծում, որ կա» /մեջբերում հարցազրույցներից/:*

*«Սահմանման հարց կա՝ ինչ ենք մենք հասկանում ֆեմինիստական շարժում ասելով: Իմ պատկերացմամբ՝ չկա շարժում, կան միայն առանձին խմբեր ու անհատներ, նախաձեռնություններ, որոնք իրենց գործունեության բերումով առաջ են տանում այդ հարցերը: Մեծ հաշվով՝ շարժում չկա, հիմա սպագնացիայի վիճակ է հեղափոխությունից, պատերազմից հետո: Հանրային մեծ էֆեկտ չկա: Իսկ*

*դրանից առաջ ինչ-որ փուլերում մոբիլիզացիան ավելի մեծ է եղել, իսկ դրանից հետո էներգիան պարպվել է: Տվյալ պահերին մենք շատ չենք քաղաքականացրել այդ հարցերը» /մեջբերում հարցազրույցներից/:*

Միևնույն ժամանակ, ըստ հետազոտության բոլոր մասնակիցների, ֆեմինիստական շարժումը Հայաստանում ունի վերաիմաստավորման կարիք՝ հատկապես հետպատերազմյան համատեքստում: Վերաիմաստավորումը կապվում է հիմնականում 2020 թվականի պատերազմի և դրանից հետո ընթացող ցավալի իրադարձությունների հետ:

*«Կարծում եմ, որ հիմա ժամանակավորապես դադար կա, կամ էդքան էլ ակտիվություն չի նկատվում, և էդ դադարը, հույս ունեմ, որ ոչ թե վատ իմաստով ա, այլ դադարին, իհարկե, նպաստել են և՛ քովիդը, և՛ պատերազմը, և կարծում եմ՝ էն կանայք, որոնք զբաղվում են կանանց հարցերով, հիմա որոշակի վերաիմաստավորման կարիք ունեն իրենց գործողությունների մեջ: Այսինքն՝ կարծում եմ՝ էդ դադարը լավ իմաստով ա, որպեսզի նորից իրան վերագտնենք, որովհետև պատերազմը բավականին շատ հարցեր առաջ բերեց, և՛ պատերազմը, և՛ նաև կանանց իրավունքների թեման աջակցող մեր միջազգային գործընկերների վերաբերմունքը ընդհանրապես իրավունքների վերաբերյալ, պատերազմի ժամանակ իրանց ցուցաբերած*

*անտարբերությունը, կարծում եմ, տեղում մեզ մոտ շատ հարցեր առաջացրեց» /մեջբերում հարցազրույցներից/:*

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ ֆեմինիստական շարժման ներկա փուլն ուղեկցվում է մասնակիցների ընդհանուր հուսահատվածությամբ և հյուծվածությամբ: Վերջին տարիների ճգնաժամերը թուլացրել են շարժումը և անորոշություն են առաջացրել դրա ներսում: Սրան զուգահեռ՝ մասնակիցների շրջանում կա ցանկություն հասկանալու, թե *«ո՞նց ենք առաջ շարժվելու, որտե՞ղ ենք սխալվել, եթե սխալվել ենք, ո՞նց ենք սխալվել, ի՞նչ պիտի անենք, այդ թվում՝ նաև հակամարտության նկատմամբ մեր դիրքորոշումը ո՞րը պիտի լինի» /մեջբերում հարցազրույցներից/:*

*«Էս պատերազմի փաստը, ինձ թվում ա, ամեն դեպքում հատվում ա, այսինքն՝ պատերազմը ստիպում ա մեզ մեր օրակարգը վերանայել և ավելի հիմնավորել մեր աշխատանքը: Ինչի՞ եմ ասում. երբ որ պատերազմը գալիս ա, էքզիստենցիալ պատերազմ ա՝ գոյատևման, և միշտ չի էդտեղ հեշտ խոսել կանանց հարցերի մասին, թեև, իհարկե, միլիտարիզացիան և ֆեմինիզմը շատ ուժեղ խոսելիք ունեն էդտեղ, բայց մեր իրականության մեջ դա մի քիչ դժվար ա: Այսինքն՝ նաև էդ պատերազմը երբեմն ստիպում ա քո ֆեմինիստական ասելիքը խմբագրես, մի քիչ ավելի մեղմ ասես, որպեսզի նաև ավելի հասկացված լինես,*

*քան թե զուտ գնաս, ինչ ուզես՝ ասես, բայց պատին կպնես, հետ գաս: Ասենք՝ եթե ուզում ես բան փոխես, պիտի մի քիչ մանեվրես էլի ամեն դեպքում: Ինձ թվում ա՝ յուրահատկություն՝ չէ, բայց էդ սպեցիֆիկան կա, որ մենք ամեն դեպքում պատերազմի մեջ ենք հիմա, և դա, ուզենք թե չուզենք, ազդում ա մեր կանանց հարցերի ընթացքի, բովանդակության վրա» /մեջբերում հարցազրույցներից/:*

Հետազոտության մաս կազմած բոլոր մասնակիցները նշում էին, որ տարբեր պատճառներից ելնելով՝ ֆեմինիստական շարժումը դադարել է լինել փողոցի շարժում: Փոխարենն ակտիվացել են ադվոկացիոն և հետազոտական աշխատանքները:

*«Բայց ինչ-որ հասունության փուլ ենք մտել, կարելի ա նաև դա նշել, որ ավելի շատ օրենքի մակարդակում փոփոխություններին ենք ձգտում, ադվոկացիային, ավելի շատ փորձ ու նաև անձինք, ովքեր ունեն էդ հմտությունները ադվոկացիոն պլաններ կազմելու և օրենքների մակարդակով փոփոխություններ բերելու, շատացել են, էդ տեսանկյունից ռեսուրսները շատացել են: Ու միգուցե դա ա պատճառը, որ էլ փողոց դուրս գալու կարիքը չկա: Բայց ամեն դեպքում, երբ որ խոսում ենք շարժում որպես էդպիսին, առաջին բանը, որ գալիս ա իմ մոտ, դրանք հենց էդ ակցիաներն են, պայքարն ա հենց փողոցում» /մեջբերում հարցազրույցներից/:*

*«Մինչև 2018 թվականը ֆեմինիստական շարժումը հիմնականում կենտրոնացած էր ակտիվիզմի վրա, ինչը հեղափոխությունից հետո մեծ հաշվով մարեց: Այժմ շարժումը կարծես անտեսանելի լինի հանրության լայն շրջանակների համար, քանի որ ակցիաներ գրեթե տեղի չեն ունենում» /մեջբերում հարցազրույցներից/:*

Հետազոտությունը ներառել է նաև շարժումների գնահատման գործիք, որը մշակվել է Կանանց համաշխարհային հիմնադրամի կողմից և օգտագործվում է շարժումների զարգացման փուլերը և առաջնահերթությունները հասկանալու համար: Ըստ անցկացված հետազոտության՝ ֆեմինիստական շարժումը Հայաստանում գտնվում է ֆորմալացման/ինստիտուցիոնալացման փուլում: Սա ենթադրում է, որ շարժումներն ավելի պրոֆեսիոնալ են դառնում ֆորմալ կազմակերպությունների, վարձատրվող անձնակազմի և կոալիցիոն ռազմավարությունների միջոցով: Շարժումներն ունեն ավելի մեծ հասանելիություն և ճանաչում քաղաքական էլիտայի կողմից և ներգրավված են ավելի քիչ զանգվածային գործողությունների ռազմավարությունների մեջ:

Ֆեմինիստական շարժման ամենահրատապ առաջնահերթությունները, ըստ հարցածների, տեսլականի և նարատիվների ձևավորումն է, ինչպես նաև՝ համագործակցությունը և համակարգումը:

Ըստ քանակական հարցման արդյունքների՝ հարցվածների մեծամասնության կարծիքով՝ շարժման անդամները կոլեկտիվ գործողությունների միջոցով գրավել են իշխանություն ունեցողների ուշադրությունը: Միևնույն ժամանակ, ըստ հարցվածների՝ շարժման անդամներն այդքան էլ արդյունավետորեն չեն ներգրավում հասարակության լայն զանգվածներին ֆեմինիստական շարժման մեջ: Ինչ վերաբերում է ֆեմինիստական շարժման առաջնորդության հարցին, ապա հետազոտության մասնակցիների կարծիքով՝ շարժումը կարիք չունի հատուկ առաջնորդների, և յուրաքանչյուր խումբ ինքն է ընտրում՝ ով է իր առաջնորդը: Այնուամենայնիվ, ըստ հարցվածների՝ շարժման երիտասարդ անդամները շատ քիչ են ստանձնում առաջնորդական դերեր: Գնահատելով ֆեմինիստական շարժման տեսլականը և նարատիվները՝ հետազոտության մասնակիցները համաձայնեցին այն կարծիքի հետ, որ շարժման անդամները կիսում են այն հստակ տեսլականը, թե ինչի համար ենք մենք պայքարում և ինչպիսի աշխարհ ենք փորձում ստեղծել: Այնուամենայնիվ, ըստ հետազոտության մասնակիցների՝ շարժման անդամներն այդքան էլ արդյունավետ չեն հաղորդակցվում լայն հանրության հետ տեսլականը ներկայացնելու հարցում:

Հարցման մասնակիցների կարծիքով՝ Հայաստանում կան ճանաչված կազմակերպություններ կամ

կոալիցիաներ, որոնք աջակցում են շարժման անդամներին արդյունավետ հաղորդակցվել: Դրական կարելի է համարել նաև այն, որ նույնիսկ չգալով համաձայնության որևէ հարցի շուրջ՝ շարժման անդամները կարող են շարունակել միասին աշխատել ընդհանուր տեսլականի ուղղությամբ: Սակայն, ըստ հարցվածների՝ շարժման անդամների միջև չկա համախմբում՝ համատեղ ռազմավարություն մշակելու համար:

Ընդհանուր առմամբ՝ հարցման մասնակիցները բավականին ցածր են գնահատել շարժումը անվտանգության և պաշտպանության տեսանկյունից: Մասնավորապես, հարցվածների կարծիքով՝ *«շարժման անդամները գրեթե չեն համախմբվում ռիսկերը բացահայտելու և թվային անվտանգության պլաններ մշակելու համար»:*

## Հայաստանյան ֆեմինիստական շարժման հիմնական առանձնահատկություններն այսօր և հիմնական քննարկվող թեմաները

Ըստ հետազոտության մասնակիցների՝ որոշ ֆեմինստական խմբեր/կառույցներ Հայաստանում օգտագործում են գաղութատիրական լեզու և վերարտադրում են իշխանական հարաբերություններ: Հաճախ առաջանում են նաև արդար վարձատրության և ինստիտուցիոնալ շահագործման հարցեր:

*«Ես հասկանում եմ, որ հնարավոր ա ֆինանսավորում ստանալ ինչ-որ արևմտյան տեղից, բոլորն էլ հիմնականում էս կառույցների առումով կամ մեծ մասը, ստանում են, բայց նաև թե էդ ոնց ա մատուցվում, ինչ լեզվով են էդ ամեն ինչը իրականացվում: Հաճախ շատ ուժեղ գաղութատիրական ինչ-որ լեզու ա օգտագործվում, ու ես մեկ-մեկ զարմանում եմ՝ ոնց ա էդ օքեյ էդ ֆեմինիստական միջավայրում, կամ ոնց ա օքեյ վերարտադրել էդ իշխանական ձևը» /մեջբերում հարցազրույցներից/:*

*«Կանանց հարցերով երկու խնդիր եմ նկատել. լեզուն է սխալ, մարդկանց հետ պետք է այլ լեզվով խոսել, ժարգոններ ենք օգտագործում, որ մարդիկ չեն հասկանում: Պետք է իրենց լեզվով իրենց խնդիրը բացատրել: Երկրորդ խնդիրը՝ արդյոք պետք է հենց*

*խնդրի մասին խոսել, թե միջավայր ստեղծել այդ կանանց ինքնաարտահայտման համար» /մեջբերում հարցազրույցներից/:*

*«Լեզուն, պետք ա հաշվի առնել, թե ինչ լեզվով մենք պետք ա խոսանք, որ մեզ հասկանան, լեզուն, որով խոսում ենք խնդիրների մասին, մարդկանց հետ ու մարդկանց մասին ու ջանք անել բացատրել, մեկ-մեկ հոգնում ես, բայց պետք ա ջանք անել ու բացատրել ու փորձել նենց բացատրել, որ հասկանան, որովհետև դրանով դու նաև օգնում ես իրանց, գործիքակազմ ես տալիս իրանց՝ էն բառերը, որով իրանք իրանց մասին կարան մտածեն» /մեջբերում հարցազրույցներից/:*

Նկատվում է նաև մեկ այլ բացասական միտում.

*«...հետո վատ տենդենցներ էլ կան, մի քիչ տենց professionalized ա դարձել, մարդիկ տենց մտածում են՝ ֆեմինիզմը գործ ա, որ պետք ա անեն, կամ եթե աշխատում են ֆեմինիստական կազմակերպությունում, ուրեմն իրանք ֆեմինիստներ են: Մի քիչ վատ ազդեցությունները կան էլի, որ դա դարձել ա ոչ թե գաղափարախոսություն, ոչ թե արժեք, որին դու հավատում ես, այլ դա դարձել ա քո գործը» /մեջբերում հարցազրույցներից/:*

Հայաստանյան ֆեմինիստական շարժման առանձնահատկություններից ևս մեկը, ըստ մասնակիցների, շարժման կենտրոնացումն է Երևանում և համեմատաբար մեծ քաղաքներում:

*«Կենտրոնացած ա քաղաքում, քաղաքներում, համալսարանական ինչ-որ տենց շրջանակներում, ինքը հանրային-մասսայական դեռ չի դարձել, աշխատավորի, գյուղի մարդու հետ դեռ շատ չի առնչվում» /մեջբերում հարցազրույցներից/:*

Ըստ հետազոտության մասնակիցների՝ այսօր ֆեմինիստական շարժման օրակարգը Հայաստանում հստակ ձևակերպված չէ: Տարիներ առաջ շարժումը, ի դեմս Ընդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի, ուներ հստակ նպատակ՝ ընդունել ընտանեկան բռնության օրենքը, սակայն օրենքի ընդունումից հետո շարժման նոր օրակարգ դեռևս չի ձևավորվել: Ավելին՝ հստակ օրակարգ չունենալը պայմանավորված է նաև Հայաստանում և տարածաշրջանում իրար հաջորդող ճգնաժամերով:

*«Էդ շատ մեծ խնդիր ա, որովհետև չունի օրակարգ ֆեմինիստական շարժումը: Ինձ թվում ա՝ կար օրակարգ՝ ընտանեկան բռնության օրենքի ընդունումը, բայց ընդունումից հետո ես հստակ օրակարգ չեմ տեսնում: Հնարավոր ա, որ կան ինչ-որ տարբեր ուղղություններ, բայց օրակարգ չեմ տեսնում, որովհետև իմ կարծիքով կոմունիկացիան էլ ա բաց տարբեր օղակների մեջ. անհատներ, խմբեր ազնվորեն չեն նստում, հետդ քննարկում, թե ով ինչ vision ունի, որտեղ ա պետք իրան օգնություն, որտեղ մյուսը կարա իրան միանա, ինքը ինչ կարա share անի, դրա համար օրակարգ չեմ տեսնում» /մեջբերում հարցազրույցներից/:*

«Ֆեմինիստական շարժումները շատ երկար ժամանակ անտեսել են ճգնաժամերի ներկայությունն իրանց կյանքում: Ինչքան էլ մենք խոսացել ենք պատերազմի մասին, ինչքան էլ մենք զբաղվել ենք խաղաղաշինությամբ, ես էլ ներառյալ: Ես հիմա պատերազմից առաջ, ընթացքում և նույնիսկ հետո շատ բաներ վերլուծելուց հետո հասկացա, թե ինչքան բաներ բաց ա մեր մոտ, երևի դրա համար հենց պատերազմից հետո կազմակերպություն բացեցի, որը պիտի ավելի մոտիկից աշխատի պատերազմի, խաղաղության, coexistence-ի ու տենց բաների հետ, որովհետև անխուսափելի են: Այսինքն՝ ճգնաժամերը սրում են էն բոլոր խնդիրները, որ արդեն կան, ու մենք անընդհատ հետևանքի հետ ենք աշխատում, բայց ոչ միայն: Նախ մի կողմից կանխարգելիչ բաներ առանձնապես չենք անում, ասենք՝ տարիներով աշխատում ենք ընտանեկան բռնության հետ, բայց դա էն ընտանեկան բռնությունն ա, որը որ սրվել ա առաջին պատերազմից հետո, ու հիմա մենք երկրորդ, երրորդ ալիքների հետ գործ ունենք: Ու մենք անընդհատ աշխատելու ենք դրա հետ, որովհետև մենք ավելի համակարգային լուծումներ չենք բերում, ավելի համամարդկային չենք նայում մարդկային անվտանգությանը, չենք բերում դա ֆեմինիստական օրակարգ, ֆեմինիստներից շատերը նույնիսկ խուսափում են «Կանայք, խաղաղություն, անվտանգություն» եզրույթից ու էդ ոլորտից, որովհետև կարծում են՝ դա ֆեմինիստական չի, այսինքն՝ էն, ինչը քեզ վախացնում ա, ավելի լավ ա՝ ես

*չկպնեմ դրան, գամ ինչ-որ ապահով փիրույթ, էդ ապահով փիրույթում իմ պուպուշ campaign-ները անեմ, ու լավ ա, որովհետև ես անտեսում եմ, բայց դա պետք ա չելենջ արվի, ու իմ mission-ը դա ա էս պահին» /մեջբերում հարցազրույցներից/:*

Ըստ հետազոտության մասնակիցների՝ ելնելով հայաստանյան համատեքստից՝ ֆեմինիստական շարժումը պետք է որ ավելի մեծ ուշադրություն դարձներ խաղաղության հարցին, սակայն մինչ օրս *«հայրիշխանական համակարգի դեմ պայքարի կարևորագույն կոմպոնենտներից է նաև ռազմականացման, պատերազմների և կոնֆլիկտների դեմ պայքարը, և ըստ էության՝ աշխարհում ֆեմինիստական և խաղաղարարության շարժումները ձեռք ձեռքի են շարժվում առաջ: Հայաստանում ցավալի մարտահրավեր է, որ ապրելով 30 և ավել տարի կոնֆլիկտի պայմաններում, ինչպես նաև Ղարաբաղյան երկրորդ պատերազմից 4 տարի անց դեռևս խաղաղության մասին խոսակցությունները տաբուացված են, հնարավորություն չի նշմարվում ստեղծել խաղաղության շարժում» /մեջբերում հարցազրույցներից/:*

## Ովքեր են ֆեմինիստական շարժման մասնակիցները

Անցկացված հարցազրույցներից պարզ է դառնում, որ ֆեմինիստական շարժման մասնակից/անդամ իրենց համարում են այն մարդիկ, ովքեր նույնականացվում են ֆեմինիստական շարժման հետ և վաղ տարիքից նկատել և պայքարել են իրենց և այլ կանանց կյանքերում հանդիպած անարդարության և խտրականության դեմ:

*«Առաջինը՝ երևի ինքնանույնականացումն է ՝ ես ինձ ոնց եմ տեսնում, ես ինձ համարո՞ւմ եմ ֆեմինիստ: Ինձ թվում ա՝ էդ էլ ա պատրիարխալ բան, որ ինքը ունի, չէ՞, տենց մուտքեր, ելքեր, ինիցիացիաներ, տենց բաներով պիտի անցնես, որ հետո քեզ համարեն խմբի անդամ: Ես կարծում եմ, իմ տպավորությունը էն ա, որ դա չպիտի ունենա ոչ մի օֆիցիալ մուտքի, ելքի բան: Ես իմ հռչակմամբ ինքս ինձ դարձնում եմ էդ գաղափարին հավատացող մարդկանց խմբի մաս» /մեջբերում հարցազրույցներից/:*

*«Նախ ինչ-որ պահի ես ՝ որպես կին, որն ապրում ա Հայաստանում, զգացի լիքը գենդերային խտրականություններ և փորձեցի դրանք հասկանալ, հետևաբար հասկանալու համար ես ուսումնասիրեցի ինչ-որ գրականություն, հետո նաև ունեցա ընկերուհիներ, որոնց հետ մենք նույն բաները քննարկում էինք և նույն պատճառներն էինք գտնում,*

*նաև ես որպես լրագրող լուսաբանեցի կանանց թեմաներ ու ոչ միայն կանանց թեմա, ցանկացած թեմա, որը լուսաբանում ես, դու տեսնում ես գենդերային սպեկտրը, օրինակ՝ ցանկացած public speech-ի մեջ կա սեքսիզմ և այլն: Էդ ամեն ինչը տեսնելով, գրելով դրա մասին՝ շարժման մարդիկ էլ արդեն գիտեին, որ ես կարամ գրեմ, ինչ-որ նյութեր էին ուղարկում» /մեջբերում հարցազրույցներից/:*

*«Ֆեմինիզմի դեպքում էլ ով իրան համարում ա ֆեմինիստ և հաշտ չի անարդարություն հետ ու սեռով պայմանավորված անարդարության դրսևորումների հետ, ինձ համար ֆեմինիստ ա» /մեջբերում հարցազրույցներից/:*

Հետազոտության մասնակիցների կարծիքով՝ այժմյան ֆեմինիստական շարժումը Հայաստանում բաղկացած է ավելի «անկախ», ինքնաբուխ ֆեմինիստական խմբերից՝ մի կողմից և ինստիտուցիոնալացված ֆեմինիստական միավորումներից՝ մյուս:

Որոշ ֆեմինիստներ նշում էին նաև, որ հայաստանյան ֆեմինիստական շարժման մասնակիցները հիմնականում ունեն շատ քիչ անձնական ռեսուրսներ: Այնուամենայնիվ, ըստ հարցվածների՝ ֆեմինիստական շարժման ներկայացուցիչների մեծ մասը «*քաղաքաբնակ, որոշակի սոցիալական կարգավիճակ ունեցող կանայք են, որոնց հաջողվել ա որոշակի ձևով անկախ լինել, անկախանալ և մտածել*

*իրենց կյանքը կազմակերպելու մասին, հատկապես երևի երևանաբնակ, միջին տարիքի, բարձրագույն կրթություն ունեցող» /մեջբերում հարցազրույցներից/:*

*«Հիմնականում և՛ կազմակերպությունները, ՀԿ-ները, և՛ անհատ ակտիվիստները, բայց հիմնականում Հայաստանում ավելի շատ ՀԿ-ներն են, որ ինչ-որ բան drive են անում, առաջ են տանում» /մեջբերում հարցազրույցներից/:*

## Արդյոք ֆեմինիստական շարժումն ունի ֆինանսավորման կարիք

Ըստ հարցման մասնակիցների՝ յուրաքանչյուր շարժում, այդ թվում՝ նաև ֆեմինիստական, ունի ռեսուրսների կարիք: Մինչ օրս ֆինանսական ռեսուրսները հիմնականում եղել են դրսից, սակայն հենց շարժման ներսում ևս ձևավորվում են որոշակի փոխօգնության ձևեր, որոնք կարող ենք նպաստել շարժման արագ զարգացմանը:

Միևնույն ժամանակ, չափազանց կարևորվում են ֆինանսավորման աղբյուրը և ռեսուրսների հավաքագրման ճանապարհները:

*«Ունի միանշանակ, բայց եթե մենք հասունանանք այնքան, որ կարողանանք էդ ռեսուրսները ինքներս ստեղծել, օրինակ, սոցիալական ձեռներեցության միջոցով և այլն, և ավելի անկախանանք: Միանշանակ*

*ունի, որովհետև եթե սոցիալիստական ֆեմինիզմի տեսանկյունից նայենք, անհավասարությունը հենց գալիս ա ըստ իր էդ ուղղության, որ ֆինանսապես կախում ունենք պատրիարխատին հարող ուժերից: Եթե անկախանանք էդ տեսանկյունից, ապա ավելի լավ կլինի ըստ էս ուղղության: Միանշանակ ունի» /մեջբերում հարցազրույցներից/:*

*«Բնականաբար, իհարկե ունի: Ֆեմինիստական շարժումը լայն ասված բան ա, ու հիմնականում ինչի համար են ֆինանսները պետք. պետք ա, որպեսզի շարժումն էլ ավելի մեծանա, էլ ավելի տեսանելի դառնա, տեսանելիությունը պետք ա բարձրացվի: Եթե հիմա համեմատենք, Հայաստանի ընդամենը 40-50%-ը գիտի ֆեմինիզմի մասին, գյուղական հաստատություններում, մարզերում էդ խայտառակություն ա: Պետք ա մի քիչ տեսանելիությունը բարձրացվի, ու ֆինանսավորումը միշտ պետք ա լինի կանանց իրավունքներում: Հիմնականում պետք ա ֆինանսավորումը ուղղվի էն ոլորտին, որը վերաբերում ա կանանց նկատմամբ բռնությանը, սեռական բռնությանը, առհասարակ դրան պետք ա շատ ուղղված լինի ու էդ ամբողջ խնդիրները բարձրաձայնելուն» /մեջբերում հարցազրույցներից/:*

Հետազոտության մասնակիցներից շատերը նշում էին նաև երկարատև և ինստիտուցիոնալ ֆինանսավորման բացակայության մասին, ինչը բացասական ազդեցություն է ունենում ֆեմինիստական շարժման զարգացման վրա:

*«Ամենաառաջնային խնդիրը ֆինանսական սահմանափակ ռեսուրսներն են, որոնք թույլ չեն տալիս իրականացնել ավելի երկարատև ծրագրեր» /մեջբերում հարցազրույցներից/:*

## Ֆեմինիստական սոլիդարություն

Հետազոտության մասնակիցների շրջանում կա բավական արմատացած գիտակցում ֆեմինիստական սոլիդարության մասին: Այն ընկալվում է որպես միասնական քաղաքական գործիք՝ ուղղված հայրիշխանական, կապիտալիստական, գաղութատիրական համակարգերի տապալմանը: Միևնույն ժամանակ, այդ քաղաքական գործիքը հիմնված է քույրության, հոգատարության մոտեցման ու սկզբունքների, ինչպես նաև կնատյացության որևէ ձևի բացառման վրա:

*«Ինձ թվում ա՝ եթե համեմատում ենք ուրիշ շարժումների հետ, ֆեմինիստական շարժումը ամենասոլիդարն ա ուրիշ շարժումների հետ, որովհետև, օրինակ, բնապահպանական շարժման մեջ ներգրավվածությունը կա: Հենց նույն զինված ուժերում էդ սպանությունների և խոշտանգումների հետ կապված Հայաստանում մեծ բողոքի ալիքներ են պարբերաբար լինում, ու, ասենք, էլի կանանց շարժումը շատ սոլիդարությամբ ներգրավվում ա: Նույնն էլ կարող ենք տեսնել տարբեր սոցիալական անարդարությունների դեմ շարժումներում: Հա,*

*ամենասոլիդարը կանայք են, բայց կանանց շարժման մեջ նենց չի, որ մյուս շարժումները գալիս են, բավարար սոլիդար կերպով ներգրավվում են: Մի քիչ միակողմանի ա, բայց երևի ամեն դեպքում մի քիչ ժամանակ կպանի, որ իրանք ևս ներգրավվեն, որովհետև ինձ թվում ա՝ ֆեմինիստական շարժումը ամենազգայուններից մեկն ա, և վախ կա դրա հետ ասոցացվելու, ընդհանրապես ֆեմինիզմի հետ էլ ասոցացվելու վախ ունեն մարդիկ կամ մտածում են՝ կեղծ օրակարգ ա: Բայց եթե համեմատում ենք ուրիշ շարժումների հետ, կանանց շարժումը ավելի սոլիդար ա, քան նրա հետ են սոլիդար» /մեջբերում հարցազրույցներից/:*

Ֆեմինիստական սոլիդարության դրսևորումներից մեկը կանանց համար ապահով տարածքներն են. տարածքներ, որտեղ կանայք կարող են հավաքվել և հանգիստ զրուցել:

Հետազոտության մասնակիցների կարծիքով՝ ֆեմինիստական շարժումը Հայաստանում բավարար ինտերսեկցիոնալ և ներառական չէ: Շարժումից դուրս են մնում տրանս անձիք և քվիր ինքնություններ ունեցողները, ինչպես նաև, օրինակ, եզդիական համայնքի կանայք:

*«Ֆեմինիստական շարժումը Հայաստանում վերջին տարիներին թեև քայլեր և ջանքեր գործադրում է դեպի ներառականություն՝ հասարակության տարբեր ոլորտներում գենդերային հավասարության լոբինգի*

*և աշխատանքների միջոցով, մասնավորապես՝ ուշադրություն հրավիրելով այնպիսի հարցերի վրա, ինչպիսիք են գենդերային բռնությունը, վերարտադրողական իրավունքները և կանանց քաղաքական մասնակցությունը, և կան նաև փորձեր՝ քննարկումների և որոշումների կայացման գործընթացներում ներգրավելու տարբեր ծագում ունեցող, այդ թվում՝ եզդիների նման էթնիկ փոքրամասնությունների կանանց ձայները, այնուամենայնիվ, այդ ջանքերը բավարար չեն և չեն ապահովում ցանկալի արդյունք և փոփոխություն: Այս իմաստով՝ ազգային և էթնիկ խմբերին պատկանող կանանց, հատկապես՝ եզդիական համայնքի կանանց ծանրակշիռ մեծամասնությունը շարունակում է դուրս մնալ ֆեմինիստական շարժման կարևորագույն օրակարգերից և ծրագրերից» /մեջբերում հարցազրույցներից/:*

*«Եվ ես կարծում եմ, որ գաղափարական ինտերսեկցիոնալիզմ Հայաստանում շատ կա, այլ ինձ թվում ա՝ ուղղակի ռեֆորմին ուղղված լիբերալ-սոցիալիստ ֆեմինիստների խմբերը իրար հետ այնուամենայնիվ որոշակի խոսակցություն ունենում են, էդ խոսակցությունից միայն դուրս ա մնում շատ ռադիկալ տրամադրություն ունեցող մի 5-6 հոգի, որոնք որ իրանց ցանկությամբ չեն ուզում մտնել էդ խումբ, բայց դե էդ իրանց ցանկությունն ա, դրա դեմ ոչինչ չես կարող անել, չես կարա զոռով իրանց բերես, բայց դա էլ իրանց պայքարի ձևն ա, չնայած էս 15, 20*

*տարիների ընթացքում չեմ տեսել, որ էդ ռադիկալների փոքրիկ խմբակի կողմից ինչ-որ փոփոխություն լինի, բայց դե լավ ա, թող իրանք էլ լինեն» /մեջբերում հարցազրույցներից/:*

Սոլիդարության մասին խոսելիս անդրադարձ է կատարվել նաև շարժման ներսում որոշումների կայացմանը: Մասնավորապես, այն հարցին, թե ով է որոշում՝ ով է «ֆեմինիստ»: Մեծամասնությունը նշեցին, որ որևէ մեկը չունի այդ իրավունքը: Այնուամենայնիվ, ըստ հարցման մասնակիցների՝ հանդիպում են դեպքեր, երբ որոշ խմբեր իրականացնում են «վերահսկում» և իրենց իրավունք են վերապահում որակավորումներ տալու մարդկանց:

*«Իհարկե, ոչ մեկ չի որոշում: Ֆեմինիզմը ոսպիկան չի, որ ինչ-որ մեկը որոշի, որ ինքը ֆեմինիստ ա, ես ֆեմինիստ չեմ: Ամեն մարդ ինքը պիտի որոշի: Ֆեմինիստը եսիմինչ չի, ֆեմինիստը էն ա, որ գիտակցում ա որպես կին իրա իրավունքները, ինքը պատրաստ ա դրանց համար պայքարելու, իսկ Հայաստանում որոշ կանայք կան՝ ասում են. «Սա ֆեմինիստ չի, նա ռադիկալ ֆեմինիստ չի»: Դրանք ինձ համար ընդամենը ծիծաղելի մտքեր են, որովհետև էդ խոսակցությունները հիմարություններ են ընդհանրապես, դա ոսպիկան չի, դա հենց հակաֆեմինիստական ա, դա ուղղակի... ոնց ասեմ: Ավելի լավ ա չասեմ . . .» /մեջբերում հարցազրույցներից/:*

Միևնույն ժամանակ, ըստ հարցման մասնակիցների՝ շարժման ներսում եղած տարաձայնությունները և նույնիսկ կոնֆլիկտները հաճախ տանում են նաև զարգացման:

*«Ինձ համար միշտ օքեյ ա կոնֆլիկտը էս առումներով: Այսինքն՝ ունենալ տարբեր հայացքներ: Ու հաճախ իրար պայքարների ձևերը կամ պայքարները քննադատելը լիքը զարգացման ա բերելու իմ կարծիքով: Ու, այնուամենայնիվ, լինելով էդ տարբեր պայքարներում՝ չի տալիս ինչ-որ էլիտիստական իրավասություն կոչելու ինչ-որ մի բան: Իմ համար քննադատությունն ուղղված ա զարգացմանը պայքարի, ոչ թե անհատներին կամ ոչ թե ինչ-որ անուններին, այլ հենց էդ մոտեցումներին: Դրա համար, իմ կարծիքով, ոչ մեկ ոչ մի բան չպիտի որոշի՝ ով, ինչ, ոնց» /մեջբերում հարցազրույցից/:*

Հետազոտության ընթացքում մենք խնդրել էինք մասնակիցներին ստորև նկարի վրա նշել, թե որտեղ են իրենք իրենց տեսնում ֆեմինիստական շարժման տեսանկյունից: Հետաքրքրական է, որ հարցման մասնակիցների կեսը ընտրել են հետևյալ պատկերը, ինչը վկայում է շարժման մեջ գոնե մեկ մտերիմ աջակցող ունենալու մասին:



## Ֆեմինիստական շարժման ապագան Հայաստանում . ի՞նչ է պետք անել

Ընդհանուր առմամբ՝ հարցման մասնակիցները դժվարանում էին որևէ կանխատեսումներ անել ֆեմինիստական շարժման ապագայի և նույնիսկ սեփական ապագայի վերաբերյալ:

*«Ինձ թվում է՝ Հայաստանում այս պահի դրությամբ մոտ հինգ տարի ինչ-որ բան նկարագրել, հարցնել ինչ-որ մեկից շատ անարդար է: Ես փորձում եմ ինքս նաև հինգ տարի հետո ինչ եմ անելու, որտեղ եմ լինելու հարցերի վրա շատ չկենտրոնանալ» /մեջբերում հարցազրույցներից/:*

*«Չգիտեմ, ճիշտն ասած, Հայաստանում ապագայից խոսելը մի քիչ բարդ ա, էն էլ հինգ տարի հետո, էն էլ ֆեմինիստական շարժման մասին: Անկեղծ ասած՝ չեմ կարա ասեմ, չունեմ պատկերացում, նույնիսկ չունեմ պատկերացում [իր անունը] մասին, ընդհանուր առմամբ ունեմ, բայց իսկապես շատ դժվար ա քննադատել, չգիտեմ՝ ես հինգ տարի հետո ինչ կանեմ, ընդհանուր ինչ-որ բաներ գիտեմ, բայց մանավանդ ֆեմինիստական շարժման դեպքում չգիտեմ: Ինձ թվում ա՝ ամեն դեպքում ինչ-որ նոր մարդիկ կլինեն, ինչ-որ նոր բաներ կձևավորվեն գուցե: Չեմ կարա ասեմ» /մեջբերում հարցազրույցներից/:*

Հետազոտության մասնակիցների կարծիքով՝ ներկայում կարևոր և արդիական են ստորև բերված գործողությունները՝ ֆեմինիստական շարժումը ավելի ուժեղ և տեսանելի դարձնելու համար: Թեև պետք է նշել, որ հետազոտության մասնակիցներից ոմանք բավականին վերապահումով էին վերաբերվում ֆեմինիստական շարժման «ավելի արդյունավետ դառնալու» բառակապակցությանը և համարում են, որ *«պետք ա հասկանալ՝ ինչի ենք ուզում ավելի ազդեցիկ լինի և ավելի շատ մարդկանց գրավի: Մտածում ենք, որ ինչքան շատ մարդ տեղյակ լինի, էդքան շատ բան կփոխվի: Շատ բաներ, երբ պոպուլյար են դառնում, իրանց պոտենցիան կորում ա օրինակի համար: Իմ համար պարտադիր չի, որ ավելի շատ ներգրավված լինի, իմ համար ավելի կարևոր ա, որ էն մարդիկ, ովքեր ներգրավված են, շատ խորը աշխատանք են անում» /մեջբերում հարցազրույցներից/:*

## 1.Շարունակել խթանել ֆեմինիստական շարժման զարգացումը, ամրապնդել սոլիդարությունը

*«Ինձ թվում ա՝ ուղղակի ցանցը շարունակել սարքել: Իրար ճանաչող կանանց, որոնց հետ նաև իմաստային որոշակի գաղափարական կապեր ես ստեղծում, որ իրար հասկանում են ուղղակի, երբ իրար հետ խոսում են՝ կապ չունի՝ կոֆեի բաժակի շուրջ ա, թե ինչի շուրջ ա: Ինձ թվում ա՝ մարզերում, քաղաքում բան չկա, ես գնում եմ գյուղ: Մեր ներկայությունը անսպասելի տեղերում անսպասելի ձևերով, ինձ թվում ա՝ կսկսի*

*ակտիվացնել: Պետք ա հիմա առարկայացնել էդ անսպասելի տեղերում անսպասելի ձևերով հայտնվելը՝ էդ ինչ ա նշանակում: Էս փուլը շատ օբյեկտիվ ա, որ պիտի անցնենք, մի հատ նաև մենք էլ մեր մեջ հասկանանք՝ ինչ ենք ուզում» /մեջբերում հարցազրույցներից/:*

*«Շարժման կարևորության մասին խոսալը, տարբեր խմբերի հետ տարբեր զրույցներ ունենալը, իրար լսելը երևի, տարբեր խմբերի միջև խոսակցություններ մտցնելը, ծավալելը, էդ փոխհատվելիությունը ցույց տալը: Ինձ թվում ա՝ տարածքները նաև, ընդհանուր common ground գտնելը, ֆիզիկական առումով տարածքներ ունենալ խոսալու, հավաքվելու, կիսվելու ու էդ տարածքները փորձել պահպանել» /մեջբերում հարցազրույցներից/:*

Շատ էր նշվում նաև իրար ավելի լավ ճանաչելու, անձնական պատմություններով ավելի ազնիվ կիսվելու գաղափարը:

*«Ինձ թվում է՝ ավելի շատ հենց էդ խոսակցության կարիք կա. էսօրվա մեր իրականությունը, մեր անձնական, գաղափարական ապրումների, փորձառությունների վրա ոնց է փոխազդում, եթե դրանից ինչ-որ գործողություններ և գործընթացներ կձևավորվեն, կձևավորվեն, ավելի շատ երևի դրա խնդիրն է, քան մարդկանց քանակ ներգրավելու» /մեջբերում հարցազրույցներից/:*

## 2.Հավաքագրել անցյալի կանանց պատմություններ

*«Ինձ թվում ա՝ ժառանգությանը տուրք տալով և անցյալի կանանց հիշելով, նաև մոռացված կանանց, ոչ միայն հայտնի, որովհետև էդ էլ սերուցքային բան ա, երբ դու անընդհատ խոսում ես հայտնի կանանց մասին, դու էլիտային մոտեցում ես ցուցաբերում նաև քո անցյալին, 100 տարի առաջվա կանանց պատմությունները իմանալ» /մեջբերում հարցազրույցներից/:*

## 3.Ուժեղացնել խաղաղության դիսկուրսը

*«Ինձ թվում ա՝ խաղաղության շուրջ բոլոր ֆեմինիստները պիտի էդ ձայնը ունենան, ուրիշ ոչ մեկ չի վերցնի: Մամաները ուրիշ ձևի, զոհված տղեքի մասին խոսելու... իրանք իրավունք ունեն, էդ ձևով պիտի խոսեն, ու ես չեմ, որ պիտի բան ասեմ, բայց մեր ձայնը էս ամեն ինչում պիտի լինի: Այսինքն՝ ոնց ենք մենք պատկերացնում իրար հետ ապրելը, և որն ա լինելու էն սկզբունքային ելակետը, որի շուրջ մենք խոսալու ենք մյուս կողմերի հետ: Էդ բռնության մերժո՞ւմն ա լինելու: Ինձ թվում ա՝ հա: Եվ եթե դա բռնության մերժումն ա, էդ դեպքում ինքնությանն ենք մենք գալու, ինքնության շուրջ մեր պատկերացումներով մենք գալու ենք նրան, որ պետք ա ազնիվ զրույց ունենանք դիմացինի հետ, թե մենք ոնց ենք նկարագրում դիմացինին, ու որտեղ ա ընդեղ բռնությունը» /մեջբերում հարցազրույցներից/:*

## 4. Շարժման ապակենտրոնացում

*«Միանշանակ մարզերի հետ կապը, ապակենտրոնացումը, երիտասարդների ու նաև տարեցների հիմնախնդիրները հաշվի առնելը, հետազոտություններ անելը հենց էդ շրջանում, որովհետև իմ կարծիքով հիմնականում թիրախը մինչև հիմա եղել են երիտասարդների շրջանում 25-ից մինչև 55 տարեկան անձանց շրջանում հետազոտություններ, բայց մյուս խմբերը ավելի հաշվի առնել, իրանց հետ կապված հետազոտություններ շատ անել: Նույնիսկ եթե փողոցում դուրս չենք գալիս, ինչ-որ ցույցեր չենք անում, էն կազմակերպությունները, որոնք ադվոկացիոն պլաններ ունեն, շատ ներկայացնեն էդ պլանները, շատ քննարկեն դրանց մասին, անպայման ներառեն մյուս կազմակերպությունների ու անհատների քննարկումների մեջ, ծավալուն աշխատանք ա, բայց դա կօգնի» /մեջբերում հարցազրույցներից/:*

## 5. Ավելի պատրաստ լինել արձագանքելու հումանիտար ճգնաժամերին

*«Սկսում են հումանիտար օգնություն տալ, սկսում են քննադատել՝ վայ, վույ, էլ պատրիարխատը, միլիտարիզացիան վատ ա, էս ինչ էր, հետո քննադատել մյուս կողմի ֆեմինիստներին, իրանց արժեհամակարգը: Ոչ մի նախնական*

*պատրաստվածություն, ոչ մի քննարկում, ոչ մի early warning system-ի վրա ուշադրություն, ոչ մի բան չկա ու չի եղել: Ու նույնիսկ հիմա, երբ երկու տարի ա անցել, մենք փորձում ենք էդ ուղղությամբ բաներ անել՝ խոսակցություն սկսել, տարբեր շրջանակներում քննարկել էս հարցը, բայց դեռ չկա էդ օրակարգը, չկա էդ պատրաստվածությունը, լավ ա, որ էս հետազոտությունը անում եք, կարողա արդյունքում մենք էլ ինչ-որ բաներ իմանանք ու համապատասխան արձագանք տանք» /մեջբերում հարցազրույցներից/:*

## 6. Ֆեմինիստական հետազոտությունների իրականացում, ֆեմինիստական գիտելիքի ձևավորում

*«Իբրև տարատեսակ հետազոտական նախագծեր իրականացնող կազմակերպություն՝ կարծում ենք, որ ավելի շատ ջանքեր պիտի գործադրվեն ֆեմինիստական թեմաների շուրջ հետազոտությունների իրականացման, էսսեների, գրական գործերի, արվեստային գործերի ստեղծման և դրանց հանրահռչակման ուղղությամբ: Մյուս խնդիրը, որին ցանկանում ենք անդրադառնալ, ֆեմինիստական համայնքներում միջգիտակարգային մոտեցման պակասն է, օրինակ՝ ֆեմինիզմի և գաղութային անցյալի համադրման և/կամ այլ թեմաների: Այդուհանդերձ, նշված խնդիրների շուրջ մի շարք քայլեր են ձեռնարկվում հատուկենտ*

*ֆեմինիստական համայնքների, կազմակերպությունների և անհատ ֆեմինիստների կողմից, ինչն անչափ գնահատելի է» /մեջբերում հարցազրույցներից/:*

## 7. Ֆեմինիստական գրականության թարգմանություն

*«Ես վստահ եմ, որ պետք ա առաջինը լավ գրականություն թարգմանվի մասնագիտական, բայց ոչ միայն մասնագիտական, նաև գեղարվեստական, այսինքն՝ պետք ա թարգմանություններ անենք, որովհետև, իհարկե, ահռելի ծավալ կա և՛ տեսական, և՛ ոչ տեսական, դա մեկ: Երկրորդը՝ պետք ա հետազոտությունները շատացնենք, որպեսզի մեր հասարակությանը շատ ավելի լավ ճանաչենք, շերտավորվածությանը շատ ավելի լավ ճանաչենք, մարդկանց տրամադրություններին ավելի լավ ճանաչենք: Հիմա, օրինակ, ես զգում եմ՝ եթե 2008 թվականին ես կարում էի ֆեյսբուքում մոբիլիզացիա անեի մեր ակցիաներին՝ Թեղուտի կամ տարբեր խմբերի ակցիաներին գային, ես զգում եմ, որ հիմա էդ ջահել սերունդը՝ ինձնից հետո էկող, ես 40 տարեկան եմ հիմա, 20 տարեկաններ ֆեյսբուքում համարյա չկան, իրանք սաղ ինստագրամում են, այսինքն՝ ես պիտի գնամ ինստագրամ, որ ինստագրամում սկսեմ մոբիլիզացիա անել էդ թեմաները էլի: Էդ պատկերները փոխվում են, պիտի նաև մենք, որպես էդ թեմաների մեջ, շատ ճշգրիտ պատկերացում*

*ունենանք էդ դինամիկաների, ընթացքների մասին, որ մենք էլ ճիշտ կողմից մոտենանք հարցերին» /մեջբերում հարցազրույցներից/:*

## 8. Աշխատանք դեռահասների հետ

*«Դե որ պատերազմ չլիներ... Ինձ թվում ա, որ դեռահասների հետ աշխատելը լիքը բան փոխող ա, որովհետև դեռահասության տարիքում գտնվող մարդիկ էն մարդիկ են, որ հինգ տարի հետո կարան լինեն ակտիվիստներ, ովքեր լավ պատկերացնում են՝ ինչ ա ֆեմինիզմը և այլն: Դեռահասների հետ աշխատելը, ինձ թվում ա, շատ օգտակար ու շատ արդյունավետ ներդրում ա, որ կարա ֆեմինիստական շարժումն առհասարակ անի: Եթե ավելի տոլերանտ լինեինք իրար հանդեպ, ինձ թվում ա՝ էդ էլ կարա օգնի, որ ֆեմինիստական շարժումն առհասարակ ավելի մեծ լինի, ավելի աճեղ լինի և այլն, բայց ըտեղ էլ շատ հարցեր կան, ես հիմա ասում եմ՝ տոլերանտ լինենք, բայց լիքը դեպքերում լինում ա, որ ինքս որոշում եմ ինչ-որ խմբի կամ ինչ-որ կազմակերպության հետ չհամագործակցել, որովհետև էդ գաղափարական անհամաձայնությունները շատ սկզբունքային են լինում, դրա համար էս շատ միանշանակ չի, որով պետք ա և կարող ա գոյություն ունենալ: Ֆինանսական ռեսուրսներն էլ կարան ինչ-որ ձև նպաստող լինեն ավելի մեծ թափով ու ավելի շատ գործեր անելու, որովհետև ես, օրինակ, հիմա տեսնում եմ կազմակերպություններ, ում*

*ֆինանսական ռեսուրսներն աճում են, և իրանց գործողությունների քանակն էլ մեծանում ա, հետևաբար մարդկանց էլ ավելի շատ են ներգրավում» /մեջբերում հարցազրույցներից/:*

## 9. Ապահովել շարժման ինտերսեկցիոնալությունը

*«Մեկ էլ, ինձ թվում ա, դանդաղ քայլերով մոտենալու ենք էն մտքին, որ ինտերսեկցիոնալության թեմաները ավելի շատ քննարկենք, ավելի տարբեր խմբերի կարծիքները հաշվի առնենք, բայց շատ դանդաղ ենք գնալու դրան, կարող ա մի հինգ տարի հետո նոր ունենանք պատկերացում՝ ինչ ա ինտերսեկցիոնալությունը, որ խմբերի հիմնախնդիրներն են կարևոր, ինչ բացթողումներ ունեինք, որ էսօր հաշվի չենք առել, հինգ տարի հետո նոր կունենանք վերջնական եզրակացություն դրա մասին» /մեջբերում հարցազրույցներից/:*

## 10. Ապահովել ֆեմինիստական շարժումը տարբեր գործիքներով /համայնքների հետ աշխատանք, կոլեկտիվ խնամք և այլն/

*«Քլիշե պատասխան եմ տալու, որովհետև նոր հեծանիվ չեմ հորինելու: Շարժումները ակտիվացնում ա ֆինանսավորումը, լավ տեսանելիությունը, լավ կապերը, եթե հա, շարժման անդամները կամ ակտիվիստները, ունեն լավ ֆինանսավորում, լավ*

*tool-եր՝ և հանրային tool-եր, և իրենց community-ների հետ աշխատելու tool-եր, էդ ա նպաստում, ինչ-որ արտասովոր բան չկա, բայց նաև անվտանգային հարցերը, եթե ունենան well being մեխանիզմներ, security մեխանիզմներ, որոնք կկարողանան իրանց օգնել» /մեջբերում հարցազրույցներից/:*

© Հայաստանում կանանց հիմնադրամ, 2025
www.womenfundarmenia.org